# Մանրահատակի լաք

## Նկարագրություն

- Թափանցիկ
- Կայուն  լվացման և մեխանիկական ազդակների նկատմամբ

## Բաղադրություն

Պոլիուրեթանային եթերային խեժ, սեկատիվներ, ուայթ սպիրիտ, փայլը և ամրությունն ավելացնող պոլիմերային հավելանյութեր:

## Նշանակություն

Նախատեսված է ցանկացած տեսակի մանրահատակի, փայտյա իրերի լաքապատման համար:

## Մակերեսի նախապատրաստում

Ներկվող մակերեսը պետք է լինի մաքուր, չոր, զերծ փոշու հատիկներից և յուղային հետքերից:

## Օգտագործում

- Անհրաժեշտության դեպքում ներկը նոսրացնել ուայթ սպիրիտով կամ այլ բենզինային լուծիչներով:
- Աշխատանքը կարելի է կատարել վրձնով կամ ներկագլանով:
- Լաքապատման աշխատանքները կատարել +5՛C-ից ոչ ցածր ջերմաստիճանային պայմաններում:
- Կարելի է քսել երկու շերտով:
- Շրջապատող օդի +20՛C -ի և խոնավության 65% պայմաններում երկրորդ շերտի ներկումն իրականացնել մոտավորապես 24 ժամ հետո:
- Աշխատանքից հետո գործիքները լվանալ լուծիչով:
- Աշխատանքից հետո պահպանել տարածքի օդափոխությունը:
- Օգտագործված տարաներն աղբահանել սահմանված կարգով:

| | |
|---|---|
| Քսվող մակերեսի ջերմաստիճան | +5°C-ից +30°C |
| Ծածկողականություն՝ մեկ շերտով (լաբորատոր պայմաններում): Ներկի ավելի ստույգ ծախսը կախված է օգտագործվող մակերեսից և նրա հարթության աստիճանից: | 1 լ - 8-10 մ² |
| | 3.785 լ - 30-38 մ² |
| | 20 լ - 160-200 մ² |
| Վերջնական չորացում +20°C և 65%-ից ոչ բարձր օդի խոնավության պայմաններում | 72 ժամ (3օր) |

## Փաթեթավորում

3.785լ և 20լ մետաղյա տարաներ:

## Պահպանում

Պահել փակ վիճակում, +5°C-ից ոչ ցածր ջերմաստիճանային պայմաններում: Պահպանման ժամկետը՝ փաթեթավորման վրա նշված արտադրման օրվանից 12 ամիս:

## Անվտանգության կանոններ

- Պահել արևի ճառագայթներից հեռու:
- Պահել կրակից հեռու:
- Պահել երեխաների համար անհասանելի վայրում:
- Մեծ մակերեսներ ներկելիս՝ պահպանել շնչառական օրգանների անվտանգությունը՝ կրելով պաշտպանիչ դիմակ:
- Խուսափել մաշկի հետ շփումից:
- Աչքի մեջ ընկնելու դեպքում դիմել բժշկի:

## Ուշադրություն

- Այլ պայմաններում աշխատանքների իրականացման դեպքում վերոնշյալ ցուցիչները  կարող են շեղվել:
- Արտադրողը պատասխանատվություն չի կրում աշխատանքների ոչ ճիշտ կատարման դեպքում: